ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Էլ փոստ getq.shirak@mta.gov.am

Հասցեն գ. Գետք Գետքի խճուղի1/1

Հեռ. 093459350

-----31------

13.03. 2017թ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ՊԱՐՈՆ

Հ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ՝

Գետքի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում Գետքի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ի թիվ 4-Ն և 5-Ա որոշումները:Կից երեք էջ:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝

ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 2678-17
13. 03. 17 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ն

<<10-ը >> մարտի 2017 թվական գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 23-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Եկամտային մասի <<Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար>> հոդվածի <<2733.0>> հազար դրամ թիվը փոխարինել <<3233.0>> հազար դրամ թվով,

<<Այլ գույքի վարձակալությունից մուտքեր>> հոդվածի <<82.0>> հազար դրամ թիվը փոխարինել <<182.0>> հազար դրամ թվով,

<<Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի,իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար>> հոդվածի <<63.0>> հազար դրամ թիվը փոխարինել <<135.0>> հազար դրամ թվով:

Ծախսային մասի համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման և տնտեսագիտական դասակարգման՝

<<Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում>> ծրագրի <<16887.5>> հազար դրամ թիվը փոխարինել <<17687.0>> հազար դրամ թվով,այդ թվում ֆոնդային բյուջե տողի <<5200.0>> հազար դրամ թիվը փոխարինել <<6000.0>> թվով,ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

<<Տրանսպորտային սարքավորումներ>> 5121 հոդվածի <<4200.0>>հազար դրամ թիվը փոխարինել <<5000.0>> թվով,

<<Մշակույթի տներ , ակումբներ,կենտրոններ>> ծրագրի <<3200.0>>հազար դրամ թիվը փոխարինել <<2400.0>>հազար դրամ թվով,

<<Շենքերի և շինությունների կառուցում>> 5112 հոդվածի <<3200.0>> թիվը փոխարինել <<2400.0>> հազար դրամ թվով:

<<Պահուստային միջոցներ>> 4891 հոդվածի <<1986.5>> հազար դրամ թիվը փոխարինել <<2658.5>> հազար դրամ թվով:

Կողմ(5) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Համայնքի ավագանու անդամներ

Աղուզումցյան Գուրգեն կողմ
Թորոսյան Ալբերտ կողմ
Հովհաննիսյան Արտավազդ կողմ
Շաբոյան Քաջիկ կողմ
Սարիբեկյան Գուրգեն կողմ

ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
<<10-ը >> մարտի 2017 թվական

գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ա

<<10-ը >> մարտի 2017 թվական գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,10065 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմանում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-032-0021- կադաստրային ծածկագրով 0.10065 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողամասը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում ինքնակամ կառուցված առևտրի օբյեկտի շինությունն օրինականացնելու և հողամասի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Համայնքի ղեկավար՝ Հովհաննես Մխիթարյանին՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողերի օտագործման ժամանակավոր սխեմայով սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Կողմ՝ (5) Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0)

Համայնքի ավագանու անդամներ

Աղուզումցյան Գուրգեն կողմ
Թորոսյան Ալբերտ կողմ
Հովհաննիսյան Արտավազդ կողմ
Շաբոյան Քաջիկ կողմ
Սարիբեկյան Գուրգեն կողմ

ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
<<10-ը >> մարտի 2017 թվական
գյուղ Գետք